ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
Փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80,
կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1543-22 առ " 11 " 07 2022թ.

«ՋՈՒՋԵՊՊԵ» ՍՊԸ-ի տնօրեն
պրն Ա. Մկրտչյանին
E-mail: Guiseppemalimenti@yandex.com

[Ծանուցում ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-76/22-1-01/155
պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Մկրտչյան,

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար մետաղների և գունավոր մետաղների ձեռքբերման նպատակով 2022թ. փետրվարի 16-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-76/22» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՋՈՒՋԵՊՊԵ» ՍՊԸ-ի միջև 2022թ. մայիսի 24-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-76/22-1-01/155 պայմանագիրը (այսուհետև պայմանագիր)՝ 5064974,4 (հինգ միլիոն վաթսունչորս հազար ինը հարյուր յոթանասունչորս դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ ընդհանուր գնով: Համաձայն պայմանագրի հավելված № 1-ի (Տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույց) մետաղների և գունավոր մետաղների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օր՝ մինչև 22.06.2022թ.:

Պայմանագրով նախատեսված ապրանքները «ՋՈՒՋԵՊՊԵ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Տեղեկացնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծում է «ՋՈՒՋԵՊՊԵ» ՍՊԸ -ի հետ 2022թ. մայիսի 24-ին կնքած թիվ 01/155 պայմանագիրը:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքների մասով կկիրառվեն պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրենի տեղակալ,
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս. Հ.Մաթևոսյան**

'Կազմեց'
ԳԲ առաջատար մասնագետ՝
Ա. Գրիգորյան
Հեռ. 010-28-29-60, 33-08